

ԱՅԼԱԿԵՐՊՈՒԹԵԱՆ ԺԱՌ ԵՂԻԾԵՒ ՎԱՐԴԱՊԵՏԻ

Օրհնեալ ես դու ամենակալ Տէր Սստուած, Որդի եւ Բանդ Սստուած, Հօրը էակից եւ արարչակից, եւ Ս. Հոգիին գոյակից եւ համարնակից: Անայլայիլի, անփոխիսելի, անսահմանելի, անպարագրելի, անհասանելի, անըմբութիւն:

Առանց պատճառի, անժամանակ, անմահ, անքանելի, անպատմելի, անբացառիլի ծնունդ, անսահման Հօր ծոցածին Որդի եւ Բան, փառակից Ս. Հոգիի, իմաստութիւն եւ զօրութիւն, նառագայր եւ կերպարան էութեան, իբրև հաւասար եւ գործակից, զուգական ես Հօրը եւ Ս. Հոգիին, Սուրբ Երրորդութեան մէկ ընութիւն ունեցող երեք անձերէն մին կը նանցցուիս: Հրեղինները զիեզ Սստուած եւ Տէր ցոյց տուին ողջերու եւ մեռնելներու, ասսուածներու Սստուած եւ Տէրերու Տէր, որ անմահութիւնը միայն ունիս եւ անմատոյց լոյսի մէջ կը թնակիս: Դու քու խօսելի ոչինչեն լինելութեան բերիր բոլոր արարածները, Հօր հանութեամբ եւ Ս. Հոգիին գործակցութեամբ արարչագործելով երկինքն ու երկնայինները եւ երկիրն ու անոնց մէջ առկայացած կենդանինները: Դուն լոյսին եւ խաւարին հաստիշը, բոլոր երեւելիններուն եւ աներեւոյթներուն բովանդակիչն ես:

Երկինքը շինեցիր առագաստի պէս տարածելով զայն, երային ամպերով կազմած եւ ամէն կողմ նայող իր ձեւովը, երկինքի ներքեւ եղած բոլոր բաները օդին ներքեւ հովանաւորեցիր, ամենագէտ հաստողիդ հաստատած երկինքն վեր եղած ջուրը կը կոչենի հաստատութիւն, անոր վրայ է որ կը հանգչի Ս. Երրորդութիւնդ, ու իննը դասերու բաժնուած բազմահոյլ զուարքունները, որոնք երկինքը լեցուցած են, Ամենասուրբ Երրորդութեանդ փառարանիններ ըրիր, եւ առաջին լոյսէն գոյացած կարգ մը լուսաւորները բաղանդապատելով իբրև ամանեներու մէջ դրուած, երկինքի պարունակներու մէջ հաստատցիր, որպէսզի արարչական խնամարկութիւնն անդադար ընծայես երկիրն: Եւ ինչպէս տնօրինեցիր որ եղանակներու շրջանակները արեգակն, լուսինն եւ աստղերն հասկցուին, նմանապէս ամրող երկիրը երաշալի տեսկով յօրինեցիր, լեցնելով զայն լեռներով, բլուրներով, զանազան դաշտերով եւ ինքնարոյս տունկերով եւ բերքերով, որպէսզի անոր մէջ թնակին գագանները, անասունները, սողունները եւ բռչունները, եւ անկէ ընդունին եւ վայելեն իրենց սնունդը, քու շնորհիւդ, որ քաղցր կամքովդ կը կերակրես ամէնքը:

Ծովերն ալ, որոնցմէ ոմանք քու հրամանաւդ այլեւայլ տեղեր սահմանուեցան, պարապ եւ դատարկ չը բողուցիր, այլ զանոնք ալ լեցուցիր բազմազան կենդանիններով, որպէսզի ամէն բանի մէջ Տէր, արարիչ, դատաւոր եւ դարմանող երեւիս բոլոր եղականներու: Ու անոնց վրայ տէր եւ բագաւոր դրիր մարդը, զոր հողէն ստեղծեցիր փառազարդ եւ լուսազգեաց գերազանցութեամբ, եւ պայծառ տեսկով: Եւ Խշխանական պատկեր պարզեցցիր անոր իրը շնորհէ, երկրածիններու վրայ Խշխան եւ Խշխող կարգելով զայն: Ու զայն դրիր փափկութեան դրախտին մէջ, որ քու հրամանուի տնկուցաւ անմահ եւ անթառամելի, եւ անոր վայելումին յատկացուելով: Այստեղ անմահ տունկերուն մէջ անմահութիւն զգեցած, պիտի մնար ան, բարիին ու չարին գիտութեան ծառէն չուտելու պատութիրանը միայն պահելով: Եւ որովհետեւ հրեշտակներուն իրենց պատիւն աւելի սարսափելի եւ սիրալի ցոյց տուիր մարդուն պատիւը, բանարկու սատանան, որ այն ատեն տակաւին հրեշտակական աստիճան ունէր, նախանձեցաւ մարդուն պատիւին վրայ, վասնզի իրմէ աւելի գերազանց էր մարդը իր փառքովն ու պայծառութեամբը, ու նոյն իմաստուն գագանին մէջ մտաւ եւ անոր միջոցաւ խօսեցաւ նախաստեղծ կոյսին հետ, որ դեռ անվարժ էր անոր բարքին, որպէսզի անոր միջոցաւ դիւրաւ խարէ իր զուգակից Ադամը: Եւ երբ անոնք նաշակեցին այն պտուղէն, որմէ չուտել հրաման եղած էր իրենց, ստախօսութեամբ խարելով զանոնք, իսկոյն մերկացուց զանոնք իրենց

Աստուածահրաշ զարդարանքներէն: Աստուածներ պիտի ըլլաք, ըստ անոնց, ու պիտի նանչնաք բարին ու չարը: Նեղենքը աստուած ըլլալու չհասան, բայց բարին ու չարը նանչցան, ուստի փառքէն ու անմահութենէն մերկացած ու զատուած, ողորմելի իրենց մերկութիւնը եւ եղկելի տեսքը պատառատուն տերեւներով ծածկեցին: Ու մեղք գործած ըլլանին պատճառելով ուզեցին պահուըտիլ նիւղալից ծառի մը ներքին:

Երբ տարամերժուեցան անմահական դրախտէն, եւ անկէ դուրս տաժանելի եւ աստանդական կեանք մը ապրեցան, այն ատեն է որ քու բարերարութենէդ իրաման ընդունեցին տրտմութեամբ զաւակ ծնիլ եւ երեսի քրտինքնվ ուտել հաց եւ նորէն դառնալ այն հողը, ուսկից ստեղծուած էին: Այս պատճառաւ մահը բագաւորեց մարդկային ազգին վրայ, մեղքը մահուան ծառայեց, եւ բանսարկուին կամքը չարին կամքին հետեւելով պէսպէս կուապաշտութեանց մէջ ընկդմեց մարդերը, քու արարչական սուրբ անունդ քարերու, փայտերու եւ մեռելուի ուկորներուն վրայ դնելու աստիճան, վասնզի քու նախախնամութիւնդ, շատ ստրչացած, բաժնուեցաւ եւ հեռացաւ մեր բնութենէն, այս պատճառաւ մարդիկ դժոխին մէջ մնացին եւ մահուան ստուերներու մէջ բնակեցան:

Ցեսոյ քու արարչական գրութիւնդ խանդաղատեցաւ, տեսնելով որ քու անարատ ձեռքիդ ստեղծուածները մեղքի կապանքներուն մէջ սեղմուած են, անտարբեր չմնացիր անոնց հանդէպ, նախախնամական սիրով այցելեցիր եւ երեւեցար անոնց այլեւայլ ատենները, օրէնքներ տրւիր, մարգարէներ դրկեցիր, որոնք կանխեցին աւետարանել քու դէպի մեր բնութիւնը խոնարհումդ: Եւ որովհետեւ շատ գէշ կերպով փիրաւորուած էինք բանսարկուեն, ո՛չ օրէնքները եւ ոչ մարգարէները մահուան զօրութենէն չկրցին փրկել մարդկային բնութիւնը, այս պատճառաւ մարդանալուդ եւ մենակելուդ կարօս մնացինք:

Եւ որովհետեւ շատ ողորմած, մարդաւեր, երկայնամիտ եւ բաղցը ես դուն, ի սպառ ապականութեան մէջ չբողուցիր մեր բնութիւնը: Մեր մեղքերուն համեմատ չվարուեցար մեզի հետ, եւ մեր անօրենութեան համեմատ չհատուցիր մեզի:

Այլ խօնարհելով երկինքն Ամենասուրը Կոյսին անարատ արգանդը իշար Հօրմէն դրկուած եւ Սուրբ Հոգիին հանութեամբ: Ու անխառնելի Աստուածութիւնդ նոր խառնումով մեր բնութեան մէջ խառնեցիր, եւ անշափելի եւրիխնդ մարմնի մէջ բանձրացնելով, Աստուածոյ Որդիդ Կոյսի որդի եղար: Ու զուն որ անժամանակ ես, մեզի համար ինն ամիսներ Կոյսին որովայնին մէջ բովանդակուեցար անհասանելի տնօրինութեամբ: Ցեսոյ անհառապէս ծնար Ամենա օրինեալ Աստուածածինէն: Սուրբ եւ անարատ ծնունդ, զօր միայն քու Աստուածութիւնդ կրնայ գիտնալ եւ որ անհասկնալի է մարդոց: Եւ տղու կերպարանքն Ամենասուրը Կոյսին գիրկը բազմելով, կուսական կարով դիեցար, իրբեւ մանուկ սնար, մինչեւ արքունքի հասակը մարդու հետ շրջեցար իրբեւ մարդ: Երեսուն տարեկանիդ, զուն՝ Գառն Աստուած, Յորդանան եկար, Ադամային մարմնոյ կատարեալ հասակով մարդկային մեղքը շալիած, որպէսզի Ադամին նեխած վերքը լուաս: Ամլորդի Յովհաննեսներ մկրտուեցար Յորդանանի մէշ: Քեզի հետ մէկ բնութիւն ունեցող Հօրմէդ սիրելի որդի եւ կատարեալ Աստուած վկայուեցար: Ուստի եւ քննէ անմեննելի Սուրբ Հոգիին քու վրայ Ադամակերպ իջումովը, տեսնողներուն բացայատօրէն հասկցուց թէ Դուն Ադամակերպ վերանդա, մկրտուեցար բացայատօրէն հասկցուց թէ Հոյն կատարեալ մարմինդ բաղուեցար մկրտութեամբ, հասկնան թէ Հնորհաց նոյն կատարեալ մարմինդ կը ծնին կենդանի ջուրէն, ուր քու աստուածախառն անոնք որ վերստին կը ծնին կենդանի ջուրէն, ուր քու աստուածախառն մարմինդ բաղուեցար մկրտութեամբ, հասկնան թէ Հնորհաց նոյն կատարեալ հոգին կը դրկես մեզ վերստին համար, որպէսզի անտեսանելի կերպով մեզ ալ Աստուածոյ որդիներ լինինք եւ ժառանգակիցներ եւ մասնակիցներ քու մենք ալ Աստուածոյ որդիներ լինինք եւ ժառանգակիցներ եւ մասնակիցներ Աստուածութեանդ: Եւ յետոյ անկէց սկսելով մեր փրկութեան Աւետարանութիւնը մեր մեզի սովորեցուցիր հակառակ կենալու հնարքներուն չար դիմին, որ քեզի հետ մեզի սովորեցուցիր հակառակ կենալու հնարքներուն չար դիմին, որ քեզի հետ մարտնչեցար մկրտութենէն ետքը: Ադամի հետ կոռուողը, այն ատեն, Աստուած

իմ, պարտուեցաւ և եզի ըրած առաջարկներուն մէջ, որպէսզի ստացած փորձառութեամբդ օգնական լինես փորձանաւորմներուս: Որպէս մարդ երկրի վրայ շրջեցար եւ նշմարիտ մարմնազգեցութեամբ մարդկային կիրքերը բովանդակօրէն են մէջդ կրեցիր, բացի մեղքէն: Աստուածահրաշ գօրութիւնդ բացայայտ կերպով ցոյց տուիր մարդերէն բոլոր անոնց որոնք պէսպէս ցաւերու եւ ախտերու ենթարկուած էին, եւ իշխանական վարդապետութեամբդ շատերը և եզի աշակերտ ըրիբ: Յետոյ եկար ցուցնել եւ յայտնել աստուածութիւնդ, եւ անձիդ այն վիճակովը զոր հրեշտակները գեր աղօտ կերպով կը ցանկային տեսնել, այսօր են մարմնիդ վրայ ցոյց տուիր աշակերտներուդ՝ Թարոր լերան վրայ: Քեզի հետ առիր աշակերտներէն երեքը, Պետրոսը, ու երկու եղբայրները՝ Յակոպոսը եւ են սիրելին Յովիաննեսը, որոնք խոստացան և եզի հետ խմել մահուան բաժակը: Որպէսզի են մարմնիդ վրայ տեսնեն Աղամի առաջին փառքին պայծառութիւնը, զոր անոնցմէ հաներ էր բանարկուն. ատոր համար են աղամազգեստ մարմնիդ վրայ անոնց ցոյց տուիր այդ փառքը, ու են մահուանդ պատճառաւ անոնց ունեցած երկիւղալից կասկածը փարատեցիր փառքիդ մէջ: Քեզի հետ խոսեցան չարչարաններու մասին զորս պիտի կրէիր Երուսաղէմի մէջ եւ վկայէին թէ ողջերուն եւ մեռածներուն Տէրն ըլլալով հանդերձ, և եզի ամօր պիտի չհամարէիր կամաւորապէս մեռնիլ խաչին վրայ: Խոկ անոնք որ եկեղեցին սիւները պիտի նկատուէին յետոյ, են փայլակնակայծակ նառագայրներէդ զարհուրած, վախերնեն թմբեցան եւ գետին կործանեցան, որովհետեւ զիեզ կը տեսնէին ոչ ինչպէս երէկ եւ նախորդ օրը, այլ արեւի նառագայրները արգիլերու չափ գօրաւոր եւ նառագայթատեսիլ նշոյներով կերպափոխուած, աղօթքի միջոցին: Ու կը տեսնէին իրենց չնանչցած գլխաւոր մարգարէները որոնք եկեր են փառքիդ կը ծառայէին, իրենց սուկում ազդող տեսիով մը և եզի հոսակեցիով:

Են մինչդեռ այդ մասին մտախոհութեան մէջ էին, եւ են կիսով չափ միայն բացուած աստուածային փայլումէդ շուարած, անշշունչ կեցեր էին, յանկարծ լուսաւոր ամպ մը եկաւ եւ իր հովանիկին տակ առաւ զանոնք, ու լուսեցաւ Հօրը ձայնը որ կ'ըսէ. «Դա է իմ սիրելի որդին», ինչպէս երբեմն Յորդանան: Երկիւդ եւ դոդում տուաւ անոնց, որ այլիւս պիտի չկարենային ապրիլ, թէ են ամենազօր տէրութիւնդ պահած չըլլար զանոնք, այս Աստուածահրաշ տեսիլը անյիշտառակ չքողելու համար:

Պետրոս վախէն, երեք տաղաւարներ շինենք ըսած ատեն, երբ մարգարէներն ալ և եզի հետ թուակցելով երեք անձերու խումք մը կը կազմէր, Սուրբ Երրորդութեան խորհուրդը կը նշանակէր: Նոյնպէս և եզի հետ Սուրբ լիոր ելլող երեք աշակերտներուն թիւն ալ Երրորդութիւնը կը ցուցնէր, որպէսզի այդ երեք զադափարակիցներուն մէջ հաստատուի Սուրբ Երրորդութեանդ անձնաւորութիւնը:

Սրդ, են փառքդ է որ այդ սուրբ տեղին վրայ օրինուեցաւ, Տէր, որ «իբրև Սիոնի աւետարանիչ», բարձր լերան վրայ ելլելով Օրէնքն ու մարգարէներու կատարեցիր: Որովհետեւ, եռկդ են լիոները եւ եռկդ են բարձունքները: Դուն արարչագործեցիր աշխարհը իր ամբողջութեամբը: Ծովն ու ցամաքը ստեղծեցիր, Թարորն ու Հերմոնը են անունով պիտի ցնծան: Որովհետեւ այսօր Թարոր լիոր Սինայէն աւելի կը ցնծայ, իր վրայ հրաշացած տեսնելով երեակ միաւորութիւնը: Այսօր, Սինեականէն աւելի կը պարծի Թարոր լիոր, վասնզի անոր վրայ ամպ եւ մէկ, խաւար եւ մարախուղ, ծուխ եւ հոր կային, այս պատճառաւ անարժաններու ուժերը չէին կրնար վրան ելլի: Խոկ անիկա զիեզ, որ մարմնացեալ Բանն Աստուած ես, նառագայթարանակ կերպով կը յայտնէ են աշակերտներուդ: Եւ Հօրը աւետիսին բարբառը բոլոր որդիացածներուն կը հնչեցնէ հեռաւոր ամպերու մէջէն, որոնք արդարներուն համար պատրաստուած են: Ճամբաններն ու վերելքները ա'լ հարբուած են բոլոր այն մեղաւորներուն համար, որոնք են լուսաւոր հրամաններուդ կը հետեւին,

վասնզի ջերմեռանդ սիրտով եւ հաւատելով այսօր այս սուրբ լեռան մօտեցողները երկրաւոր բարձրութենէն դեպի երկնաւոր բարձրութիւններ են ուղեւորած: Ուստի, բարերար եւ քաղցր, անխակալ եւ բազումողորմ Տէր, ու այդ հետաւոր օրեւանէդ հաշտ եւ բաց աչքով նայէ այս ժողովուրդին, որ հետիւն այս սուրբ քու լեռը ելած է, քեզի հանդիպելու եւ երկիրապագելու համար այն տեղույն վրայ ուր երբեմն կիցած են քու ուժերդ:

Ներէ անոնց իրենց կամայ եւ ակամայ մեղքերը: Տուր անոնց սուրբ սիրտ, անշփոր խորհուրդ, զգաստ միտք: Համէ անոնցմէ քարէ սիրտերը, եւ մարմնեղէն սիրտ տուր իրենց. տուր անոնց Ս. Հոգին, որպէսզի հեռացնէ զիրենք ամէն չար բաներէն եւ մօտեցնէ բոլոր բարի գործերու, որպէսզի զօրութենէ զօրութիւն ընթանան եւ այս աստուածային տօներուն նամրով յաւիտենական ուրախութիւններուն հասնին: Հերմոնական ցողը ցողէ, Տէր, Սիրն լեռան վրայ, տալով անոնց բողութիւն մեղաց: Թէպէտեւ մենին օրէ օր բազմացուցինք մեր մեղքերը, բայց դուն մեր մեղքերուն համեմատ մի՛ վարուիր մեզի հետ, եւ մեր անօրէնութիւններուն համեմատ մի՛ հատուցաններ մեզի: Մենի կաւ ենք, եւ դուն մեր ստեղծողը: Ամենին ալ քու ձեռքիդ գործերն ենք: Մենի գործեցինք, անօրէնութիւն ըրինք, յանցաւոր եղանք, խոտորեցուցինք մեր ուժերը քու շատիդներէդ, թիւրեցինք մեր սիրտը չերկնչելով քենէ:

Դարձիր, Տէր, քող մեծ մնայ միշտ քու փառքդ, չըլայ որ կրտսեցնենք սուրբ լեռանդ ժառանգութիւնը, վասնզի չունինք ուրիշ ապաւէն քենէ զատ, որ արդար եւ անարատ ես, եւ քաւիշ մեր մեղքերուն: Ի սպառ մի՛ բարկանար, եւ ձեռքէ մի՛ ճգիր քու բանաւոր հօսք, որ քու սուրբ արիւնովիդ գնեցիր եւ քեզի սիփական ժողովուրդ ըրիր: Մեր գործերովը անարգեցինք մենին քու սուրբ անունդ, այդ պատճառաւ շուտով մեր վրայ խուժեցին ամէն տեսակ հարուածներ, սով, սուր, գերութիւն, նեղութիւն, դիւական տանշանեններ, հիւանդութիւն, պէսպէս ցաւեր եւ տաժանելի ախտեր, վիշտեր երկինքնեն եւ երկիրէն, - տարածան մահեր, խոռվարար տարիներ եւ օդեր, որոնք կամ բարկութեամբ կը փակուին եւ կամ սաստկութեամբ կը բացուին: Եւ կերպ կերպ պատահարներ, որոնք մարդոց, անասուններուն եւ մեր արտերուն մէջ տեղի կ'ունենան: Եւ ուժից կոյիս եղան որոնք քու սուրբ անուն չեն կանչեր: Բայց դուն՝ անխակալ եւ կոյիս եղան առոնք քու սուրբ անուն չեն կանչեր: Բայց դուն՝ անխակալ եւ մարդասէր Տէր, թէպէտեւ մենին մեղք գործեցինք, բայց աւազանին արգանդէ քու ուժի ենք ինչած: Մենի չունինք քենէ զատ ուրիշ Աստուած: Դուն ես մեր Հայրն եւ տեսուչը եւ Հովիւը:

Մեզի դարձիր, ով մեր Փրկիչ Աստուածը, եւ քու ցասումդ հեռացուր մենին, որովհետեւ երէ մեր գործերուն համեմատ հատուցանես մեզի, մենին մեր որովհետեւ պէտք է մեր ամուսնութիւն մեր ընթացքը: Բայց որովհետեւ դուն միայն գործերովը ամէն օր կ'ապականենք մեր ընթացքը: Բայց որովհետեւ դուն միայն գործերովը ամէն մեր մեղքերուն եւ հեռացնել մենին մեր ախտերն ու հիւանդութիւնները, մեր ցաւերն ու հարուածները, քեզի կը կանչենք ամէն օր:

Մենի գործեցինք երկինքն հանդէպ եւ քու առչեւ: Աստուած քաւութիւն տուր մեզի պէտք մեղանորմերուս: Շնորհի այս օրուան, բաց մեզի ողորմութեան դուռը, որպէսզի ամօրահար չդառնանք ես, այլ մաքսաւորին պէտք արդարացած դուռը, որպէսզի ամօրահար ընթացքն անուն կառաւանը ուրախացուր զմեզ քու սուրբերուդ ես, իշնենք: Բարի վարձատրութեամբդ ուրախացուր զմեզ քու սուրբերուդ ես, որոնք սկիզբէն հանոյ եղած են քեզի, Փրկիչ Աստուած, որպէսզի անոնց հետ, արժանի ըլլանք փառաւորելու քու քաղցր անունդ, Զօր եւ Սուրբ Հոգին հետ, այժմ եւ միշտ եւ յաւիտեանս: ամէն:

Խաղաղութիւն ամենեցուն

Կրկին եւ կրկին գոհութիւն եւ երկրպագութիւն կը մատուցանենք քեզի, կը Քրիստոս Աստուած մեր, անշէջ նառագայք, որ քու աստուածութեանդ լոյսը կը ծագես քու կամարաթերուդ եւ անունդ փառարանողներու սիրտին մէջ, որ մեր ծագես քու կամարաթերուդ եւ անունդ փառարանողներու սիրտին պատիին եւ անարժանութիւնն ալ արժանի ըրիր այս մեծ օրուան հասնելու պատիին եւ աստուածութիւնն ալ արժանի ըրիր այս մեծ օրուան հասնելու պատիին այն սուրբ տօնակից ըլլալու տօնասէր եւ աստուածասէր անձերու: Մանաւանդ այն սուրբ

Հայրերուն՝ որոնք տեղապահ եւ սպասաւոր են Թարոր լեռան վրայ եղած սրբութեանց, որպէսզի անոնց աղօքեով եւ խնդրուածեովը ողորմիս մեզի եւ բոլոր հաւատացեալներուն: Անոնց հետ մենք ալ ահա ներկայ գտնուելով կը կատարենք՝ ոչ թէ եին Մովսէսի կանգնած Խորայէլագունդ ժողովուրդին աւանդած այսօրուան տաղաւարահարաց տօնը, վասնզի մենք թէեւ անշինչ կը պահենք յիշատակը այն խորանին զոր Մովսէս լենէ ուսաւ՝ իրբեւ օրինակէ, եւ օրինականին տուաւ իրբեւ օրինակ, որովհետեւ խորանը իրբեւ տաղաւար կը շրջեցնէին իրենց հետ, այլ մենք կը խմբենք տօնը քու պայծառակերպութեանդ՝ զոր քու ընտրեալներուդ ցոյց տուիր սուրբ լեռան վրայ, ըստ որում կամաւոր խաչելութենէդ, կենդանի մեռնութենէդ, կենարար յարութենէդ, եւ Ս. Հոգին առաքեալներուդ վրայ իշնելէն ետքը, աւելի սարսափելի եւ սիրալի ցոյց տուիր դուն այսօրուան լուսաւորութիւնը, եւ զայն մեր առջեւ քացիր իրբեւ առթիւր շնորհաց եւ կեանի դուռ, հինը՝ նորով, սուութեր՝ նշմարտութեամբ փոխանակելով: Այդ նշմարտութիւնը Ս. Հոգին միջոցաւ յայտնեցիր դուն առաքեալներուդ, տաղաւարական խորանին տեղ քու եկեղեցինդ շինելով խորան՝ առաքելական եւ մարգարէական կառուցուածեով՝ որուն իրբեւ անկիւնագլուխ եւ պատուական ու անշարժելի վեմ դրիբ դուն զեզ, եւ քառութեան սեղանին փոխարէն՝ ուր անասուններու արիւնը կը մատուցուէր, հաստատեցիր սրբարար սեղան, որուն վրայ կը պատարգուիս դուն, ով անարատ Գառն Աստուծոյ որ աշխարհի մեղքը քու վրադ եւ առած: Եւ սոութեակերպ քահանայութեան տեղ քու նշմարիտ քահանայութիւնդ շնորհեցիր մեզի: Քու նոր ժողովուրդին վերակացութեան առաջնորդ ընտրեցիր քու երանելի եղբայրդ Յակոբոս, որ այսօր ձեռնադրութցաւ քու սուրբ առաքեալներէ՝ որոնք քու ամենասուրբ ձեռքէդ ընդունած էին իրենց ձեռնադրութիւնը: Ու այս օրուան մէջ մատուցուեցաւ քու սուրբ պատարագդ նոր դաստակերտին նորակերտ սեղանին վրայ:

Եւ այս առթիւ, առաքեալներդ յայտնապէս տեսան Սուրբ Հոգին իշնելը սուրբ սեղանին եւ անոր վրայ պատարագուածիդ վրայ, որովհետեւ այս աւետարբեր օրը ցոյց տուիր իրբեւ օր սկզբնաւորութեան՝ ուխտերու եւ պատարագներու, քանի որ այս նորափետուր օրուան մէջ պարգևութցան մեզի նոր սեղան, նոր պատարագ եւ պատարագի նոր մատուցող: Օրինութեան աղ ալ հաստատեցիր մեր մէջ, որ է Հոգույդ շնորհը, որով թժշկաւթիւն տուիր մեր նեղութեան, ու հինին եւ նորին մէջ եղած բոլոր շնորհներով զարդարեցիր այսպէս այսօրը, սոյն այս կերպով երեւեցար առաքեալներուն ի Գալիլեա, որովհետեւ այսօրուան հրաշքը շտանողները երկուանենի մէջ մնացեր էին. եւ զեզ սիրողներուն՝ դարձեալ այս կերպով է որ պիտի ցուցնես երկրորդ գալուստդ, որպէսզի անոնք ալ նոյն ողջոյնը եւ խաղաղութիւնը ընդունած ըլլան լենէ:

Եւ հիմակ, Տէր մեր եւ Աստուած, որ տուիչ ես բարիթներու եւ պարգևատու առատ ողորմութեանց, շնորհէ որ մեր քահանայական վերադիտողութիւնն ալ աննենգ հայեցողութեամբ յիշէ զեզ, սուրբ սիրտով եւ կատարեալ հաւատեով սպասաւորէ սրբարար սեղանիդ, հաղորդուի քու հաշտարար մարմինիդ եւ արիւնիդ, եւ հաղորդէ արժանապէս քու նորածնած ժողովուրդդ, ու սրբութեամբ եւ արդարութեամբ հովուէ քու արիւնովդ գնած հօտդ. դալար վայրի վրայ ընակեցնել եւ հանգստաւէտ ջուրերու քով սնուցանել: Տէր իմ, Յիսուս Քրիստոս, մի նայիր իմ անարժանութեանս, որ մեղապարտ անձովս ամօրալից, կեցած եմ առջեւդ. զի դուն գիտես իմ յանցանեներս, դուն որ սիրտերն ու երիկամունքները կը լննես: Զեմ կրնար լեզմէ ծածկել իմ մեղքերուս շատութիւնը: Ու կ'աղաչամ զեզ, մարդասէր եւ քաղց Տէր, ցոյց տուր մեզի եւ այս ժողովուրդին եւ բոլոր հաւատացեալներուն: Կ'աղաչամ զեզ, Տէր, քարեխօսութեամբ Աստուածածնի՝ անարատ ծնողիդ, եւ Ցովիաննու կարապետին եւ սրբոյն Ստեփանոսի նախավկայի եւ քու սուրբ առաքեալներուդ եւ

մարգարեթներուն եւ աշակերտներուն, որոնք լեզի հետ սուրբ լերան վրայ էին, եւ գլխաւոր մարգարեթներուն եւ բոլոր սուրբերուն եւ Սուրբ Յակոբ առաջին Հայրապետին:

Օրինել եռ այս ժողովուրդը, որ եռ սուրբ անունդ կը փառաւորէ: Եւ ի բարին կատարէ մեր խնդրուածքները: Անշարժ եւ անվորդով պահէ Ընդհանրական Եկեղեցին Ենրկային մէջ իր ամբողջութեամբը, քահանաներով, փարզապետներով եւ ուխտի մանկունքներով: Հաւատքի հիմին վրայ հրաշանորոգ պահէ Քու Սուրբ Եկեղեցին, փրկելով ամէն երեւելի եւ աներեւոյթ փորձուրիններէ: Ու զօրութեամբն ու հովանիին Ենրեւ սուրբ խաչին որուն վրայ մածուած արիւնովդ՝ անբաժանելի հեղուսումով, պահպանէ բոլոր լեզի հաւատացեալները, իւրաքանչիւրն իր կարգին համեմատ, եպիսկոպոսները, երեցները, սարկաւագները, եւ տուր ամէնուն բարի կարգաւորութեան եռանդ, եւ ամբողջ եռ սուրբ Եկեղեցիիդ ուխտը, բագաւորները, իշխանները, եւ անոնց զօրքերը արիացուր սուրբ խաչիդ զօրութեամբը, ամէն պատերազմներու մէջ, ու եռ սուրբ կրօնիիդ թշնամինները լոեցուր եւ հնազանդեցուր անոնց ոտերուն տակ: Ճգնաւորական կենցաղի մէջ միանձնացածները պաշտպանէ թշնամիին հաղբերէն, մինչեւ վերջը անսասանելի պահելով անարատ փարքով:

Ամուսնացածներուն կարողութիւն տուր սրբութեամբ եւ արդարութեամբ վերաբերուել իւրառու հետ Սուրբ Հոգիին սիրովը: Անոնց զաւակները սնուցուր եւ անեցուր եռ երկիւղովդ եւ սիրովդ, եւ պահպանէ տղայական պատահարներէ:

Մերերուն շնորհէ զգաստութեան հոգի, որպեսի մտերնէն չհանեն ընաւ թէ այս աշխարհէն պիտի ելլեն, մեկնին ի վերջոյ: Ամէնքը պահպանէ, Տէր, Քու սուրբ խաչովդ եւ այս օրուան շնորհովը: Ինուարներն ու մերձաւորները, անոնք որ ծովու վրայ եւ ուղեգնացութեան մէջ են, եւ անոնք որ ցաւերու եւ վտանգներու եւ նեղութեան մէջ կը գտնուին:

Գերիններուն դարձ շնորհէ, Տէր, բանտարկեալներուն եւ կապեալներուն՝ ազատում, մեղաց՝ լուծում, դեւերուն՝ հալածում, հաւատացեալներու պատերազմներուն՝ յաղթուրիւն: Պապանեցուր հերուստոններուն բերանները, մարէ օտար թշնամիններու ձգած խոռվութեան կրակը:

Պահէ եռ բանաւոր հօտդ՝ զգանեններէ եւ սուրուններէ, բունաւոր ննիններէ, անկումներէ, ընկդմումէ, երկիգութենէ, ջրահեղանութենէ, սառնամանիններէ, աւազակներէ, հովերու սաստկութենէ, եւ ամէն վնասակար տարբերէ, որովհետեւ բոլոր գոյակները եռ հրամանիդ կը հնազանդին: Օրինել, Տէր, այս տարին եւ իր պտուղը, անփորձ պահելով ամէն ճախողութենէ: Տարւոյն սկզբէն մինչեւ վերջը աջդ մեր վրայ ըլլայ միշտ: Այսօրուան շնորհը սկանչելի դարձուր մարդոց, անասուն կենդանիններուն եւ անկենդաններուն մէջ, ամպերուն, օդին, բոյսերուն եւ տունկերուն մէջ, անվնաս պահէ ամէնքը՝ ամէն կարգի պատահարներէ, որոնք եռ հրամանովդ կու գան: յաջողուրիւն տուր մեզի որ սիրով եւ արդարութեամբ եւ խաղաղութեամբ կատարենք մեր կեանքը եւ ուղղափառ դաւանութեամբ կնենք զայն: Ցիշէ, Տէր այն նեշեցեալները, որոնք ուղիդ դաւանութեամբ աւարտեցին իրենց երկրաւոր օրերուն ընթացքը, եւ հանգիստ շնորհէ անոնց՝ արդարներու օրեւաններուն մէջ շնչելով անոնց կամաւ եւ ակամայ, գիտութեամբ եւ անգիտութեամբ գործած մեղքերուն ձեռագիրը, որպեսի եռ հրաբուուք գալուստիդ վերջին օրը ամէնքը արժանացնես լուսեղէն ամպերու վրայ ընդ առաջ բռչիլ լեզի, եւ եռ վերին Սիոնին մէջ եռ սուրբերուդ հետ երգնէն ընդ առաջ բռչիլ լեզի, եւ եռ վերին Սիոնին մէջ եռ սուրբերուդ հետ երգնէն մեր փրկութեան համար տնօրինուածիդ եռակիւսեակ սրբութիւնը Հօր եւ Սուրբ Հոգիին հետ. այժմ եւ յախտեանս յախտենից. ամէն:

Թարգմանեց՝
ԹՈՐԳՈՒՄ ՊԱՏՐԻԱՐՔ ԳՈՒՉԱԿԵԱՆ